ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
հասցե՝ք.Երևան, Նալբանդյան5, սենյակ 22ա,հեռախոս՝(+37493)515-600,(+37491)515-600
էլ. հասցե՝ ldpf.foundation@gmail.com

ՀՀ Լոռու մարզպետարան
Հասցե՝ ք.Վանաձոր, Հայքի հրապարակ

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի տնօրեն՝
Գենյա Պետրոսյանից
Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 5, 22ա սենյակ

30.11.2019թ.

ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,
ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների համաձայն՝

խնդրում եմ հայտնել

1. արդյոք 2000թ. մինչ օրս մարզպետարանի՝գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը վերանայվել են, թե ոչ,
   1.1. եթե այո՝ ապա քանի անգամ և որ թվականներին.
2. մարզպետարանի ողջ գործունեության ընթացքում որն է եղել պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանման համար սահմանված նվաղագույն ժամկետը.
3. մարզպետարանի ողջ գործունեության ընթացքում որն է եղել ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանման համար սահմանված նվազագույն ժամկետը.
4. արդյոք եղել են դեպքեր, երբ պետական կամ ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները գաղտնազերծվել են սահմանված ժեմկետից ավելի ուշ.
5. արդյոք հայցողին հասանելի են դարձվում այն տեղեկությունները, որոնց՝ որպես պետական կամ ծառայողական գաղտնիք պահպանման ժամկետն ավարտվել է, դրանք գաղտնազերծվել են, սակայն դեռևս չի որոշվել դրանց հետագա ճակատագիրը՝ չի կատարվել կամ սկսվել և դեռ չի ավարտվել փորձաքննությունը /սահմանված 3-ամսյա ժամկետում/՝ դրանք արխիվացնելու կամ ոչնչացնելու հարցը որոշելու ուղղությամբ, կամ այն արդեն իրականացվել է և որոշվել է տեղեկատվությունը ոչնչացնել, սակայն դեռ փաստացի այն չի ոչնչացվել.
6. արդյոք մարզպետարանին ուղղված հարցումները երբևէ հիմք հանդիսացել են ընդլայնված գերատեսչական ցանկերի վերանայման կամ օբյեկտիվ հանգամանքների փոփոխության հիմքով կոնկրետ տեղեկատվության գաղտնազերծման համար.
7. ինչի հիման վրա է որոշվում, թե ինչ մանրամասնությամբ և ինչ եղանակով է /ինֆոգրաֆիկա, ցուցակ, աղյուսակ և այլն/ հրապարակվում մարզպետարանի տարեկան բյուջեն.
8. արդյոքմարզպետարանը հրապարակում է կամ երբևէ հրապարակել էիր բյուջեի կատարողականը.
9. 2017-2019թթ.ընթացքում քանի հարցում է մարզպետարանի կողմից ամբողջությամբ մերժվել /փաստաթուղթը չի տրամադրվել/՝ հիմք ընդունելով այն, որ հայցված փաստաթուղթը կամ այլ կրիչը պարունակում է **նաև** օրենքով պաշտպանվող որևէ տեղեկատվություն.
10. 2017-2019թթ. ստացված հարցումների քանի տոկոսին է պատասխան տրամադրվել ոչ 5-օրյա, այլ՝ 30-օրյա ժամկետում կամ դրանից ուշ.
11. արդյոք մարզպետարանը հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես տեսողական և լսողական խնդիրներ ունեցողներին հայցված տեղեկատվությունը հնարավորություն ունի տրամադրել և տրամադրում է հասանելի ձևով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
հասցե՝ք.Երևան, Նալբանդյան5, սենյակ 22ա,հեռախոս՝(+37493)515-600,(+37491)515-600
էլ. հասցե՝ ldpf.foundation@gmail.com

Միևնույն ժամանակ մեր կողմից կատարված նախորդ հարցմանն ի պատասխան՝ 10.09.2019թ. գրությամբ մերժել եք գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի պատճենի տրամադրումը: Նկատի ունենալով այն, որ ըստ "Պետական և ծառայողական գաղտնիքի մասին" ՀՀ օրենքի, գերատեսչական ցանկերը չեն գաղտնագրվում և ենթակա են հրապարակման, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերտառությունը (անվանումը) ինքնին ամրագրման փաստի ուժով կարող է լինել պետական կամ ծառայողական գաղտնիք, խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք ցանկում ընդգրկված բոլոր վերտառություններն են պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք թե ոչ, միաժամանակ, գաղտնիք չպարունակող վերտառությունների առկայության դեպքում, կարող են արդյոք տրամադրվել համապատասխան վերտառությունները:

Հարգանքով՝ Գ.Պետրոսյան